

եան հողմ, միւս կողմից արեւ չեղած՝ շուք տեղ լեռների մէջ եւ վերջապէս՝ պաղուկ ու քաց ձոր: Նկատենք մեր կողմից, որ այդ բառը նշանակում է նաեւ թանձր ու խոնաւ անտառ:

Այսպիսով կապում են իրար ցուրտ, խոնաւ, թաց, անձրեւ, փոթորիկ, մրրիկ, վատ եղանակ գաղափարները: Չմբան գաղափարն այսպիսով ճառագայթած է տարբեր ուղղութեամբ թէ՛ լեզուական ձևերի եւ թէ՛ տարրնթաց գաղափարների մէջ, որ սակայն նոյն արմատն ունին:

Կարող ենք ասել, որ վրացերէնի ցիւ եւ ծիւ արմատները, որ կշռում են մեր ձիւ եւ ձիւ արմատներին, — Հնդեւրոպական են, քա-

նի որ նոյն արմատն է նաեւ մեր քոյր լեզուների մէջ:

Չեմ ուզում փաստերից առաջ անցնել, բայց յուսով եմ ժամանակին հազարաւոր փաստեր բերելու, որոնք պիտի հաստատեն թէ հայերէնն ու վրացերէնը մի շատ հին հնդեւրոպական լեզուի բարբառներ են: Դարեր ու դարեր ապրելով Հայաստանի եւ Վրաստանի մթին ձորերում, խորին փոփոխութեանց ենթարկուելով անջատորէն եւ շատ ուշ գրի առնրելով՝ նրանք այսօր թւում են անհունապէս տարբեր լեզուներ: Առայժմ գոհանում եմ այս յայտարարութեամբ:

Սրանով վերջանում է «ձիւն» ու «ձմեռն» բառերի հնադարեան պատմութիւնը:



ԵԹԷ Կ՛ՈՒՁԷՔ ԳԻՐՔ ՄԸ ԳՆԵԼ,

Դիմեցէք «ՀԱՅՐԵՆԻՔ» ԳՐԱՏԱՆ

Եթէ մինչեւ իսկ ձեր փնտռածը չունենանք, վստահ կրնաք բլլալ որ կը գտնենք ու կը դրկենք:

Ունինք լաւագոյն գիրքերու պաշար:

HAIRENIK ASS'N

13-15 Shawmut St.,

Boston, Mass.